ԳԼՈՒԽ Ե.

1 Յաղագս որդւոց քահանայապետին Վրթանայ, որոց անուանք էին երիցուն Գրի-
գորիս, եւ երկրորդին Յուսիկ:

2 Այս Վրթանէս եւ Արիստակէս որդիք էին մեծի քահանայապետին Գրի-
գորի, եւ էր Արիստակէս կուսան՝ սուրբ ի մանկութենէ. զի թէպէտ եւ կրսեր
որդի էր, կանխաւ եհաս յաթոռ հայրենի եպիսկոպոսութեան: *3* Իսկ Վրթա-
նէս էր ամուսնացեալ եւ անորդի. եւ բազում ժամանակս խնդրէր նա յԱստու-
ծոյ. զի մի՛ զրկեսցի նա յաւրհնութենէն զաւակի, այլ ի պտղոյ նորա կացցէ ա-
ռաջի նորա ի պաշտաւն Տեառն: *4* Եւ ի ծերութեան նորա լուաւ Տէր աղաւ-
թից նորա. յղացաւ ամուսին նորա, եւ ծնաւ երկուս որդիս երկուորեակս, եւ
կոչեաց զանուն երիցուն յանուն հաւր իւրոյ Գրիգորիս, եւ երկրորդին Յու-
սիկ, որք սնան զառաջեաւ թագաւորին Հայոց, եւ ուսման գրոց փոյթ ի վերայ
կալան ուսուցանել զնոսա: *5* Ապա երէց որդին Գրիգորիս եհաս յեպիսկոպո-
սութիւն կողմանց Աղուանից եւ Վրաց, վասն հոգեկիր առաքինի արգա-
սեացն, բարեհասակ, եւ զգիտութիւն Աստուծոյ յանձին կրելով: *6* Ոչ ամուս-
նացաւ նա, այլ ի հնգետասանամենից եհաս յաստիճան եպիսկոպոսութեան
աշխարհին Վրաց եւ Աղուանից, այս ինքն սահմանացն Մազքթաց: *7* Եր-
թեալ նորոգեաց անդ զեկեղեցիսն լուսաւոր կարգաւք, առաջնոյն Գրիգորի՝
հաւրն գործոցն նմանեալ:

8 Իսկ զՅուսիկ սնուցանէր Տիրան որդի թագաւորին Խոսրովու. եւ ետ
արքայորդին Տիրան զդուստր իւր կնութիւն Յուսկանն որդւոյ Վրթանիսի:
9 Եւ մինչ դեռ մանուկն էր, յետ միանգամ յառաջնում գիշերին մտանելոյ՝ յղա-
ցաւ կինն: *10* Եւ իսկ եւ իսկ ետես ի տեսլեանն՝ զի երկու էին մանկունքն, եւ ոչ
հաճոյ ի պաշտաւն Տեառն Աստուծոյ. եւ զղջացաւ զամուսնանալն: *11* Լայր
եւ աղաչէր զԱստուած, եւ ապաշխարէր[1] մեծաւ տառապանաւք: *12* Եւ յա-
մուսնանալն բռնադատեցաւ ի թագաւորէն իբրեւ զմանուկ. սակայն եւ այն
ըստ Աստուծոյ շնորհացն գործէր, զի որք առ յապայն յառնելոց էին ի նմանէ
հովիւքն գլխաւորք, որք յաւգուտ աշխարհին եւ ի շահ մշակութեան եկեղե-
ցեաց յաւետարանական[2] հրամանացն սպասաւորել: *13* Այլ սակայն նա ըստ
այն մի գիշերն այլ ոչ եմուտ առ կինն իւր. եւ ծնաւ կինն երկաւորիս[3], որպէս
եւ ետես ի տեսլեանն յառաջագոյն. եւ կոչեցին զանուն առաջնոյն Պապ, եւ
զերկրորդին Աթանագինէս:

14 Եւ յետ միոյ գիշերոյ ի կինն մերձենալոյ այլ ոչ եւս մերձեցաւ ի նա,
վասն առաքինութեան մանկութեան. իբրեւ ոչ եթէ զամուսնութիւնն ինչ աղ-

1 *Միւս օրինակն՝* եւ ապաշաւէր
2 *Միւս օրինակն՝* աւետարանական
3 *Միւս օրինակն՝* երկու որդիս